«ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» ՓԲԸ

ՀՀ, 375012, ք.Երևան, Բուզանդ 1/4, հեռ.՝54-17-89, «Արարատբանկ» ԲԲԸ Հ/Հ 1510004597930100, ՀՎՀՀ 02504913

№ 68/657
« 15 » Հուլիսի 2025թ

«ՄԱՔՍ ՇԻՆ» ՍՊԸ-ի ՏՆՕՐԵՆ՝
ՎՈՎԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ
էլ. փոստ՝ maxshin2021@mail.ru

Հարգելի պարոն Պետրոսյան,

«Երքաղլույս» ՓԲԸ-ի և «Մաքս Շին» ՍՊԸ-ի միջև 2025թ-ի մայիսի 16-ին կնքված N«ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-25/10»-2 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր)

1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

1.2 կետի համաձայն՝ Մատակարարումն իրականացվում է Գնորդի կողմից տրված ապրանքի մատակարարման հայտի հիման վրա, Գնորդի կողմից պատվիրված քանակի չափով: Առաջին փուլի մատակարարման ժամկետը 20 օրացուցային օր է, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքերի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել կարճ ժամկետում: Հաջորդ փուլերում, մատակարարման ժամկետը՝ հայտը տալու օրվանից հաշված ոչ ուշ քան 5/հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում:

Համաձայն 2025 թվականի մայիսի 20-ի թիվ N7/2 մատակարարման հայտի՝ «Մաքս Շին» ՍՊԸ-ն ներառյալ 09.06.2025թ-նը պետք է իրականացներ N«ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-25/10»-2 պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 19-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 27-րդ 30-րդ, 31-րդ, 36-րդ և 38-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքատեսակների ամբողջ խմբաքանակների մատակարարումը:

10.06.2025թ-ի դրությամբ 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 19-րդ, 21-րդ, 23-րդ, 27-րդ 30-րդ և 38-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքատեսակների ամբողջ խմբաքանակների մատակարարումը չէր

իրականացվել, որով պայմանավորված՝ «Երքաղլույս» ՓԲԸ-ն **2025թ-ի հունիսի 11-ի թիվ 68/571** գրությամբ տեղեկացրել էր, որ ներառյալ 17.06.2025թ-նը վերոհիշյալ ապրանքատեսակների ամբողջ խմբաքանակները չմատակարարելու դեպքում՝ հիմք ընդունելով N«ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-25/10»-2 ծածկագրով պայմանագրի 2.1.7 և 2.1.7.1 կետերով սահմանված պարտադիր կանոնների պահանջը, միակողմանի լուծելու է պայմանագիրը:

Այնուհետև «Երքաղլույս» ՓԲԸ-ն **2025թ-ի հունիսի 24-ի թիվ 68/612** գրությամբ ծանուցել էր, որ.

«Մաքս Շին» ՍՊԸ-ի կողմից **11.06.2025թ-ին թիվ A1809429680 հարկային հաշվի** հիման վրա մատակարարված՝

21-րդ չափաբաժնով նախատեսված «Տեստեր-Կլեշ, մուլտիմետր» ապրանքատեսակի 40 հատ խմբաքանակի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրերին մասնավորապես՝

- Մատակարարված «Տեստեր-Կլեշ, մուլտիմետր» 40 հատ խմբաքանակի փոփոխական հոսանքի չափման միջակայքը **20-1000Ա է,** իսկ պայմանագրով սահմանվել է **առնվազն 5-400Ա:**

16.06.2025թ-ին թիվ A5525508541 հարկային հաշվի հիման վրա մատակարարված՝

5-րդ չափաբաժնով նախատեսված «Աքցան» ապրանքատեսակի 100 հատ խմբաքանակի տեխնիկական բնութագրերը և ապրանքային նշանը չեն համապատասխանում պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրերին և ապրանքային նշանին, մասնավորապես՝

- Մատակարարված BOLEMA ապրանքանիշի աքցանների 72 հատ խմբաքանակի երկարությունը **կազմում է 18.2 սմ,** իսկ պայմանագրով սահմանվել է **20-22սմ,** ինչպես նաև աքցանների կտրող շուրթերը միմյանց հետ հպվելուց ամբողջովին չեն համադրվում:
- Մատակարարված EXPLOIT ապրանքանիշի աքցանների 28 հատ խմբաքանակի հաստությունը **կազմում է 18մմ,** իսկ պայմանագրով սահմանվել է **20-22մմ,** ինչպես նաև աքցանների կտրող շուրթերը միմյանց հետ հպվելուց ամբողջովին չեն համադրվում:

Վերոհիշյալով պայմանավորված՝ «Երքաղլույս» ՓԲԸ-ի պատասխանատու ստորաբաժանման կողմից.

5-րդ չափաբաժնով նախատեսված «Աքցան» ապրանքատեսակի 100 հատ,

21-րդ չափաբաժնով նախատեսված «Տեստեր-Կլեշ, մուլտիմետր» ապրանքատեսակի 40 հատ

խմբաքանակներով ապրանքատեսակների տեխնիկական բնութագրի մասով տրվել է բացասական եզրակացություն և հիմք ընդունելով N«ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-25/10»-2 պայմանագրի 5.2 կետը «Մաքս Շին» ՍՊԸ-ի կողմից 11.06.2025թ-ին և 16.06.2025թ-ին հանձնման-ընդունման արձանագրություններով «Երքաղլույս» ՓԲԸ-ին ներկայացված վերոհիշյալ ապրանքատեսակի խմբաքանակները չեն ընդունվել և հանձնման-ընդունման արձանագրությունները չեն ստորագրվել:

17.06.2025թ-ին թիվ A7107328493 հարկային հաշվում ներառված

12-րդ չափաբաժնով նախատեսված «Գայլիկոնների հավաքածու» ապրանքատեսակի 15 **կոմպլեկտ**,

16-րդ չափաբաժնով նախատեսված «Մալուխ մաքրելու դանակ իր փոխարինիչներով» ապրանքատեսակի 20 հատ,

խմբաքանակները փաստացի չէին մատակարարվել:

Հետևաբար, հիմք ընդունելով N «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-25/10»-2 պայմանագրի 2.1.2 կետը,

«Երքաղլույս» ՓԲԸ-ն սահմանել էր Պայմանագրին համապատասխանող **որակի և քանակի ապրանքատեսակներով** անհատույց փոխարինման և մատակարարման ժամկետ՝ մինչև 30.06.2025թ-նը ներառյալ:

5-րդ չափաբաժնով նախատեսված «Աքցան» ապրանքատեսակի 100 հատ խմբաքանակը առ. **15.07.2025թ-նը** Պայմանագրին համապատասխանող **որակի և քանակի ապրանքատեսակներով** անհատույց չի փոխարինվել և չի մատակարարվել:

21-րդ չափաբաժնով նախատեսված «Տեստեր-Կլեշ, մուլտիմետր» ապրանքատեսակի 40 հատ խմբաքանակը առ. **15.07.2025թ-նը** Պայմանագրին համապատասխանող **որակի և քանակի ապրանքատեսակներով** անհատույց չի փոխարինվել և չի մատակարարվել:

17.06.2025թ-ին թիվ A7107328493 հարկային հաշվի մասով՝

12-րդ չափաբաժնով նախատեսված «Գայլիկոնների հավաքածու» ապրանքատեսակի 15 կոմպլեկտ,

16-րդ չափաբաժնով նախատեսված «Մալուխ մաքրելու դանակ իր փոխարինիչներով» ապրանքատեսակի 20 հատ, խմբաքանակները առ. **15.07.2025թ-նը** փաստացի չեն մատակարարվել:

Տեղեկացնում ենք, որ «Մաքս Շին» ՍՊԸ-ի կողմից խախտվել են Պայմանագրի էական պայմանները:

Ուստի, հիմք ընդունելով 2025թ-ի մայիսի 16-ին կնքված N«ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-25/10»-2 ծածկագրով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի ա) և բ) ենթակետերը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածը, 466-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «Երքաղլույս» ՓԲԸ-ն **2025թ. հուլիսի 15-ից** ամբողջությամբ և միակողմանի լուծում է N«ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-25/10»-2 պայմանագիրը **5-րդ, 12-րդ, 16-րդ և 21-րդ չափաբաժինների մասով**:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը Մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ «Մաքս Շին» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում՝

5-րդ, 12-րդ, 16-րդ և 21-րդ չափաբաժինների մասով՝ «Երքաղլույս» ՓԲԸ-ի «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ում բացված 1510004597930100 հաշվեհամարին փոխանցել՝

5078 (հինգ հազար յոթանասունութ) ՀՀ դրամ՝ որպես յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա դիմաց տույժ՝ N«ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-25/10»-2 Պայմանագրի 6.2 կետի համաձայն, սկսած 10.06.2025թ-ից մինչև 15.07.2025թ-նը ներառյալ, **5-րդ** չափաբաժնի մասով փաստացի ուշացրած **20 աշխատանքային** օրերի համար, համար, **12-րդ** չափաբաժնի մասով փաստացի ուշացրած **26 աշխատանքային** օրերի համար, **16-րդ** չափաբաժնի մասով փաստացի ուշացրած **26 աշխատանքային** օրերի համար **և 21-րդ** չափաբաժնի մասով փաստացի ուշացրած 17 աշխատանքային օրերի համար,

2502(երկու հազար հինգ հարյուր երկու) ՀՀ դրամ տուգանք՝ N«ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-25/10»-2 Պայմանագրի 6.3 կետի համաձայն:

52440(հիսուներկու հազար չորս հարյուր քառասուն) ՀՀ դրամ՝ որպես «Մաքս Շին» ՍՊԸ-ի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովում,

78660 (յոթանասունութ հազար վեց հարյուր վաթսուն) ՀՀ դրամ՝ որպես «Մաքս Շին» ՍՊԸ-ի որակավորման ապահովում.

5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում վճարումները չկատարելու դեպքում «Մաքս Շին» ՍՊԸ-ի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում, տուժանքի տեսքով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները և կից պահանջագրերը, տուժանքի համաձայնագրերը 1.4 կետի համաձայն կներկայացվեն «Մաքս Շին» ՍՊԸ-ին սպասարկող բանկին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Մաքս Շին» ՍՊԸ-ի կողմից, ոչ ուշ, քան գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրացուցային օրվա ընթացքում, պայմանագրի կատարման ապահովման, որակավորման ապահովման և հաշվարկած տույժի և տուգանքի գումարները վճարելու դեպքում, «Մաքս Շին» ՍՊԸ-ի նկատմամբ չի նախաձեռնվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը:

Տեղեկացնում ենք, որ անհրաժեշտ է **1 աշխատանքային** օրվա ընթացքում ճշգրտել **11.06.2025թ-ի թիվ A1809429680, 16.06.2025թ-ի թիվ A5525508541 և 17.06.2025թ-ի թիվ A7107328493 հարկային հաշիվները՝** մնացած ապրանքատեսակների հանձնում-ընդունումը կատարելու համար, այլապես «Երքաղլույս» ՓԲԸ-ն կջնջի վերոհիշյալ հաշիվները էլեկտրոնային հաշիվների դուրս գրման համակարգից:

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ *Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ*

Կատարողներ՝ Ա. Արաբյան,
Ա. Մինասյան
Հեռ. 010 54 39 80